# ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25**

ք. Մեծամոր «20» հունվարի 2026թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բլու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Դավթյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 915,000.00 (ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, վաճառողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը նայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման

արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի
վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի
պահանջների պահպանման համար:
5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող
ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1
կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում
տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում
մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում
Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման
ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի
չափով:
5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և
հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների
հետ:
5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման
դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար
հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ
հարյուրերորդական) տոկոսի չափով:
5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ
օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային
պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով
պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են
պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել
է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ
դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների
աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում
սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը
շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել
պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի
պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
պայմանագրով սահմանված պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման
պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու
հանգամանքը:
7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ
պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և ննիքով
հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ
անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օտարի պահանջների կատարման
նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ աուդիտի ընթացքում արձանագրվում
է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ
փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին
որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն
ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված
խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի
Հանրապետության օրենսդրության համաձայն որպես հիմնավորում պայմանագիրը չկնքելու համար:
Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի

համար առաջացող վնասների կամ բաց թողված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի նրան վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը հանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից ներկայացվող յուրաքանչյուր տարրերին կցված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արժեքային փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության ստացման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի անպատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով ստանալ ամեն ֆինանսավորում՝ պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ Ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահում Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ, անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, Ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է Ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության սահմանված կարգով ֆինանսական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.17 Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում որևէ էական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացությունը: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում: Եթե նախագիծը վերադարձվում է լրամշակման, որից հետևում է, որ նախագիծը ենթակա է լրամշակման՝ ըստ եզրակացությունում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, որից հետո ճշտված և լրամշակված նախագծային փաստաթղթերի մասով այն պատվիրատուի կողմից ներկայացվում է կրկնակի փորձաքննության: Նախագծման ծառայություններ մատուցող ընկերությունը պարտավոր է պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում լրամշակել նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում: Սույն դրույթի խախտումը կարող է նաև պատճառ հանդիսանալ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

7.18 Նախնական փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության ծագման դեպքում՝ կրկնակի, լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության առաջացման ցանկացած դեպքում/ /նախագծերի փոփոխության կամ լրամշակման անհրաժեշտության առաջացման ցանկացած դեպքում/ փորձաքննության իրականացնելու համար անհրաժեշտ գումարը վճարում է Կատարողը (նախագծման ծառայություն մատուցող ընկերությունը), ընդ որում նախագծերի կրկնակի, լրացուցիչ փորձաքննությունը իրականացվելու է նախնական փորձաքննություն իրականացրած կազմակերպության կողմից:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnunnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ 900332239392
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ____________ (անուն ազգանուն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Բլու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Վ2, Լվովյան 3/5
bluestream2018@gmail.com
ԻՆԵԿՈԲԱՆԿ
ՀՀ 2050822131461001
ՀՎՀՀ 00910183"

Տնօրեն՝ ____________ (անուն ազգանուն)
Կ.Տ.

Հավելված N 1
«20» Հունիսի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Հասցեն | Ժամկետը* |
| 1 | 71241200/506 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի 1-ին փողոց 2-րդ նրբանցքի , 7-րդ փողոց 1-ին նրբանցքի և 21-րդ փողոցի գազաֆիկացում:<br>Նախագծով նախատեսվում է կառուցել մոտ 330 գծմ երկարությամբ գազատար, որի ընթացքում կատարվելու է՝<br>❖ Հողային աշխատանքներ<br>❖ Սյուների տեղադրում<br>❖ Գազի գծի կառուցում<br>❖ Այլ այլ շինարարական աշխատանքներ:<br>Նախագիծը պետք է կազմվի ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:<br>✓ Տոպոգրաֆիական հանույթի տրամադրում<br>✓ Ինժեներաերկրաբանական և չափագրական հետազոտության իրականացում և տրամադրում,<br>✓ Ուսումնասիրության արդյունքում նախնական քննարկում համայնքի ղեկավարի հետ<br>✓ Աշխատանքային ծավալների կազմում<br>✓ Նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>✓ Աշխատանքային նախագիծը իրականացնել նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համաձայն<br>✓ Նախատեսել նախագծի համաձայնեցումը շահագրգիռ մարմինների և ինժեներական ենթակառուցվածքների մատակարար կազմակերպությունների հետ (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում)<br>✓ Նախագիծը ներկայացնել ամբողջական 4 օրինակ տպված և էլ. կրիչով.նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով:<br>✓ https://urban.e-gov.am/ հարթակում նախագծի ներբեռնում,<br>Մնացորդը կիրականացվի ապասարկող ընկերության հետ համաձայնեցումից և փորձաքննության դրական եզրակացությունից հետո: | դրամ | 545,000.00 | 1 | Մեծամոր համայնք Արգավանդ բնակավայր | Կողմերի միջև կնքվող Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայության մատուցումը համաձայն է ավելի շուտ ժամկետներում |
| 2 | 71241200/507 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամասի գազիֆիկացում: | դրամ | 370,000.00 | 1 | Մեծամոր քաղաք | Կողմերի միջև կնքվող Պայմանագիրը ուժի մեջ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նախագծով նախատեսվում է կառուցել մոտ 300 գծմ երեկարությամբ գազատար, որ ընթացքում կատարվելու է<br>❖ Հողային աշխատանքներ<br>❖ Սյուների տեղադրում<br>❖ Գազի գծի կառուցում<br>❖ Եվ այլ շինարարական աշխատանքներ:<br>Նախագիծը պետք կազմվի ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:<br>✓ Տոպոգրաֆիական հանույթի տրամադրում<br>✓ Ինժիներաերկրաբանական և չափագրական հետազոտության իրականացում և տրամադրում,<br>✓ Ուսումնասիրության արդյունքում նախնական քննարկում համայնքի ղեկավարի հետ<br>✓ Աշխատանքային ծավալների կազմում<br>✓ Նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>✓ Աշխատանքային նախագիծը իրականացնել նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համաձայն<br>✓ Նախատեսել նախագծի համաձայնեցումը շահագրգիռ մարմինների և ինժեներական ենթակառուցվածքների մատակարար կազմակերպությունների հետ (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում)<br>✓ Նախագիծը ներկայացնել ամբողջական 4 օրինակ տպված և էլ կրիչով,նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով:<br>✓ https://urban.e-gov.am/ հարթակում նախագծի ներբեռնում.<br>Վճարումը կիրականացվի սպասարկող ընկերության հետ համաձայնեցումից և փորձաքննության դրական եզրակացությունից հետո. | | | | | մտնելու օրվանից հետո՝, 20 օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայություն մատուցողը համաձայն է ավելի շուտ ժամկետներում |
| | | Ընդամենը | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
shumbermetsamor@mail.ru
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ______________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Բլու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Վ2, Լվովյան 3/6
bluestream2018@gmail.com
ԻՆԵԿոԲանկ
ՀՀ 2050822131461001
ՀՎՀՀ 00910183"

Տնօրեն՝ ______________ Հ. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

